

Արագածոտնի մարզպետը քաղաքացիների ընդունելություն է կազմակերպում համայնքներում

13.06.2014

Քաղաքացիների ընդունելությունների սահմանված ժամանակացույցի համաձայն Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը սկսել է երկրորդ եռամսյակում մարզի տարածաշրջաններում ընդունելության կազմակերպումը: Հունիսի 13-ին նա այցելեց Ապարանի տարածաշրջան եւ Ապարանի քաղաքապետարանում ընդունեց քաղաքացիներին, ովքեր ժամանել էին ինչպես քաղաքից, այնպես էլ գյուղական համայնքներից:

Ընդունելությանը մասնակցեց 40 բնակիչ: Նրանք մեծամասամբ՝ 31 հոգի, դրամական օգնության հարցով էին դիմել: Ոմանք մարզպետին դիմեցին միաժամանակ մի քանի հարցերով՝ բնակարանաշինության, բուժօգնության, առողջարանի ուղեգրերի եւ այլն: Դրամական աջակցության բոլոր դիմումները բավարարվեցին: Ընթացք տրվեց նաեւ առողջական խնդիրներ ունեցող 3 քաղաքացու եւ սոցիալական խնդիր ունեցող 2 քաղաքացու դիմումներին: Հարցերից մի մասի լուծումները ուսումնասիրության մեջ են, որոնց համար մարզպետը տվեց համապատասխան հանձնարարականներ:

Հունիսի 20-ին քաղաքացիների ընդունելությունը կկայանա Արագածի, հունիսի 27-ին Թալինի տարածաշրջաններում: